

Համայնքի իրավիճակի գնահատում  
Աշխարհագրական դիրքը, պատմական ակնարկ

Արարատի մարզի Տափերական գյուղը հիմնվել է 1929 թվականին, նախկինում կոչվել է Կիրովի անվան սովխոզ, 1992 թվականից՝ Տափերական: Գյուղը գտնվում է Արարատյան դաշտում, Երևանից 35 կմ հեռավորության և ծովի մակերևույթից 820 մ բարձրության վրա: Գյուղի կլիման բարեխառն է, չոր, ցամաքային, ձմեռները համեմատաբար մեղմ, ամառը՝ չոր, շոգ:

Ժողովրդագրություն

Գյուղում ապրող բնակչության սոցիալական կազմը հետևյալն է՝

1. Երեխաներ - /0-5 տարեկան/ 223 մարդ
  2. Դպրոցականներ - /6-17 տարեկան/ 855 մարդ
  3. 18-62 տարեկան - 967 մարդ
  4. Թոշակառուներ - 594 մարդ
  5. Հաշմանդամներ - 36 մարդ
  6. Աշխատունակներ - 2338 մարդ
  7. Ընտանիքների /ծխերի/ թիվը - 1050
  8. “Փարոս” ընտ. նպաստառու գրանցվածներ - 123 մարդ
  9. Գրանցված ընտրողների թիվը - 2849 մարդ
  10. Նպաստառուների թիվը - 123 մարդ
- ԸՆԴԱՄԵՆԸ - 4163 մարդ

Տեղական ինքնակառավարման մարմինները

Գյուղը կառավարվում է համայնքի ղեկավարի/գյուղապետի/ կողմից, որն ընտրվում է չորս տարին մեկ անգամ:

Գյուղապետը կազմավորել է աշխատակազմ հետևյալ կազմով՝

1. Հ/Ղ-ի տեղակալ - 1 հաստիք
2. Հ/Ղ-ի աշխատակազմի ղեկավար - 1 հաստիք
3. Հ/Ղ-ի գլխավոր մասնագետ - 1 հաստիք
4. Հ/Ղ-ի կրտսեր դասի առաջատար մասնագետ - 2 հաստիք
5. Հ/Ղ-ի 1-ին կարգի մասնագետ - 2 հաստիք
6. Հավաքարար - 1 հաստիք
7. Կուլտուրայի տան գեղ. մաս. վար. - 1 հաստիք
8. Պահակ - 1 հաստիք
9. Աղբահանող բանվոր - 1 հաստիք
10. Անասնաբույժ - 1 հաստիք

Համայնքի ենթակառուցվածքներ

Գրադարան

Գրադարանավար - 1 հաստիք

Մանկապարտեզ

Ընդամենը 21 աշխատող  
Աշխատակազմի և համայնքի ենթակայության տակ գտնվող կառույցների  
ամբողջ ապարատը բաղկացած է 40 հոգուց /որից 21-ը մանկապարտեզ/  
Համայնքի ավագանին բաղկացած է 11 անդամներից:

Համայնքի սեփականության գույքի ցուցակը սահմանված է ՀՀ կառավա-  
րության որոշմամբ

1. Ակումբի շենք - 1 հատ
2. Մանկապարտեզ - 1 հատ
3. Դպրոց - 1 հատ
4. Ոռոգման ցանց - 1 հատ
5. Ջրամատակարարման ցանց - 1 հատ
6. Գազամատակարարման ներհամայնքային ցանց - 1 հատ
7. Ներհամայնքային նշանակության ճանապարհներ
8. Գերեզմանատուն

Տնտեսական անկման հետևանքով համայնքի գույքի ֆիզիկական վիճակը  
վատթարացել է: Կարիք կա հիմնանորոգման: Հիմնական նորոգման կարիք ունի  
նաև համայնքի ճանապարհային ցանցը, իսկ համայնքի նոր թաղամասերի  
փողոցներն ունեն խճապատման կարիք:

Շրջակա միջավայրի պահպանություն

2008 թ-ի համայնքի բյուջեով նախատեսված է կատարել գյուղի  
աղբահանությունը, ապահովելով շրջակա միջավայրի պահպանության ընդհա-  
նուր նորմերը:

Գյուղում պարբերաբար անց են կացվում շաբաթօրյակներ, կատարվում  
են բնակչության հետ բացատրական աշխատանքներ, որպեսզի պատշաճ սանի-  
տարական մաքրություն պահպանվի փողոցներում ու բակերում:

Գյուղում մասամբ հիմնանորոգվել է ոռոգման ներքին ցանցը, մոտ 4000մ  
հողային հունով առուներում տեղադրվել են բետոնե ջրատարներ, մնացած  
հողային հունով առուները պետք է մաքրվեն մինչև նրանց մեջ էլ տեղադրվեն  
բետոնե վաթեր:

Բնակարանային տնտեսություն

Համայնքում կա 820 առանձնատուն:

Համայնքում կան վթարային բարաքներ:

Հիմնական վերանորոգման կարիք ունեն`

- 1.Կուլտուրայի տունը և գրադարանը իր շրջակայքով
- 2.Գյուղապետարանը
- 3.Մանկապարտեզը

Հողատարածքների օգտագործումը

- 1.Ոռոգվող հողերը - 650 հա
- 2.Վարելահող - 319.8 հա
- 3.Խաղողի այգի - 171.5 հա
- 4.Պտղատու այգի - 65.09 հա

**Գյուղատնտեսություն**

Համայնքում հիմնականում զբաղվում են բանջարանոցային կուլտուրաների մշակմամբ: Տնամերձ հողամասերում մշակում են տարբեր պտղատու ծառատեսակներ՝ ծիրանենի, դեղձենի, սալորենի և այլն, խաղող/անհատական սպառման նպատակով/, ջերմոցներում՝ պոմիդոր, վարունգ, ծաղիկներ: Վերջին տարիներին հիմնականում վարելահողերում մշակվում են ձմերուկ, պոմիդոր, վարունգ, հացահատիկ /ցորեն/:

Գյուղում առանձին անհատներ զբաղվում են անասնապահությամբ, սակայն արոտավայրեր չկան և անասնապահության զարգացումը հեռանկարներ չունի:

**Կրթությունը**

Համայնքը ունի միջնակարգ դպրոց, որը վերջին երկու տարում հիմնովին վերանորոգվել է պետության կողմից:

Դպրոցում սովորում է 433 աշակերտ:

Դպրոցի սպասարկող անձնակազմը բաղկացած է 54 անդամներից, որոնցից 36 ուսուցիչներն են:

Մսուր մանկապարտեզը ևս գործում է, ունի հիմնովին վերանորոգման կարիք:

**Մշակույթ, սպորտ, հոգևոր դաստիարակություն**

Գյուղն ունի կուլտուրայի տուն, գործող գրադարան, ծանրամարտի խմբեր, սակայն թե՛ կուլտուրայի տունը և թե՛ նրա սենյակում ծվարած գրադարանը վերանորոգման խիստ կարիք ունեն: Դպրոցում կա սպորտային հրապարակ, սպորտ դահլիճ, որից օգտվում են դպրոցականները: Գործում են սպորտային խմբակներ, սակայն գյուղի երիտասարդությունը սպորտով զբաղվելու հնարավորություն չունի: Անհրաժեշտ է կառուցել սպորտային հրապարակ, դահլիճ, որտեղ երիտասարդները ազատ ժամանակ կկարողանան սպորտով զբաղվել:

**Առողջապահությունը**

Համայնքում գործում է Առողջության կենտրոն/2 բժիշկ/: Կենտրոնը վերանորոգված է:

**Համայնքի ուժեղ կողմերը**

Համայնքն ունի 400-ից ավելի բարձրագույն կրթություն ունեցող բնակիչներ տարբեր մասնագիտությունների գծով, որոնց միջոցով կազմակերպվում է կրթության, երեխաների դաստիարակության, մշակույթի, գյուղատնտեսության, շինարարության և այլ ոլորտի աշխատանքները: Համայնքը գտնվում է Երևանից

35 կմ հեռավորության վրա և գյուղ մթերքը Երևանի շուկաներում իրացնելու մեծ հնարավորություն ունի:

Համայնքն ապահովված է ոռոգման և խմելու ջրով:

Մայրաքաղաքին մոտ գտնվելու հանգամանքը երիտասարդությանը շատ մեծ օգնություն է ցուցաբերում ուսում ստանալու և հետագայում ձեռք բերած մասնագիտությամբ աշխատելու գործում:

Համայնքի թույլ կողմերը

1. Փողոցների ոռոգման ցանցի անմխիթար վիճակը:
2. Բավականին մեծ թվաքանակով արտագաղթած երիտասարդ ընտանիքները:
3. Բարձրագույն և միջին մասնագիտական կրթություն ունեցողների գործա-զրկության բարձր մակարդակը:
4. Գյուղատնտեսական մթերքներն իրացնելիս շուկայական ցածր գների պատճառով գյուղացու եկամուտների նվազումը:

Համայնքի հնարավորությունները

1. Համայնքում մեծ աշխատուժի առկայությունը:
2. 3 գինու-կոնյակի գործարան, որտեղ որոշ չափով լուծվում է աշխատանքի խնդիրը:
3. Տնամերձ հողամասերում ջերմատների կառուցումը, ինչը բարձրացնում է բույսերի բերքատվությունը:

Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները

Հետևողական բարեփոխումների ճանապարհով բարելավել համայնքի բնակչության սոցիալ-կենցաղային, մշակույթային և հանգստի պայմանները: Բարեփոխումներ կատարելով նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին.

1. Կայացնել արդյունավետ գյուղատնտեսություն:
2. Ապահովել համայնքի մաքրությունը/մշտական աղբահանությունը և այլն/:
3. Կազմակերպել համայնքի բնակչության մշակույթային կյանքը և հանգիստը ոչ աշխատանքային ժամերին:
4. Ապահովել բոլոր տեսակի փոխադրամիջոցների նորմալ և անվտանգ աշխատանքը, երեկոյան և վաղ առավոտյան ժամերին ապահովել գյուղի ինտենսիվ տրանսպորտային կապը մայրաքաղաքի հետ:
5. Համայնքի նոր թաղամասերի ճանապարհների խճապատում:

Ըստ առանձին բնագավառների առաջնահերթ ծրագրերի, նպատակ-

ների առաջադրվում են կոնկրետ խնդիրների ձևավորում:

Ծրագիր 1

Համայնքի մսուր – մանկապարտեզի շենքը և տանիքը վերանորոգման խիստ կարիք ունեն, մանկապարտեզը չունի նաև լոկալ ջեռուցում, ապահոված չէ գազով:

Նպատակը - Մանկապարտեզի շենքի վերանորոգումը և գազաֆիկացումը, լոկալ ջեռուցումով ապահովումը կստեղծի պայմաններ մանկապարտեզը ողջ տարին շահագործելու համար:

Խնդիրները - Հիմնականում տեղական բյուջեից կատարել հատկացումներ 2009 – 2010 թթ. մանկապարտեզը գազաֆիկացնելու և լոկալ ջեռուցումով ապահովելու համար:

Ծրագիր 2

Համայնքի նոր թաղամասերի փողոցների խճապատում:

Ներածություն - Նոր թաղամասերի փողոցները կարիք ունեն խճապատման:

Նպատակը - Նոր թաղամասերի փողոցների բարեկարգում:

Խնդիրները - Հիմնավոր նախագծա–նախահաշվային փաստաթղթերի առկայության դեպքում տեղական բյուջեից կատարել հատկացումներ 2009 թ. նոր թաղամասերի փողոցների խճապատման համար:

Ծրագիր 3

Ներածություն - Գյուղի կենտրոնում բարեկարգման աշխատանքների կատարում:

Նպատակը - Հուշարձան - կոթողի շրջակայքի բարեկարգում:

Խնդիրները - Հատկացում տեղական բյուջեից, վարձատրվող հասարակական աշխատանքներ ծրագրով կատարել այդ աշխատանքները:

Ծրագիր 4

Ներածություն - Որակյալ խմելու ջրով բնակչության շուրջօրյա ապահովում: Խմելու ջրի մատակարարման ցանցի հիմնովին փոխում:

Նպատակը - Շուրջօրյա ջրամատակարարում որակյալ ջրով:

Նոր թաղամասերում խմելու ջրագծերի անցկացում, ջրի պահեստային աշտարակի կառուցում:

Խնդիրները - Տեղական բյուջեում նախատեսել հատկացումներ խմելու հին ջրագծերի նորով փոխարինման և նոր թաղամասերում ջրագծերի անցկացման համար:

ՀՀ Կառավարության հաստատված ծրագրով Տափերական համայնքը ընդգրկվել է բնակավայրերի խմելու ջրով ապահովման Համաշխարհային բանկի միջոցներով կատարվող ծրագրում և այդ աշխատանքները սկսվելու են 2009 թ. գարնանից: Այդ աշխատանքները

րին համայնքը պետք է ունենա իր մասնակցությունը, ավագանու որոշմամբ հողատարածք պահեստային ռեզերվուարի հառուցման համար:

Գյուղը շրջապատող դրենաժների մաքրման աշխատանքներ:

Ծրագիր 5  
Փողոցների ասֆալտապատում

Ներածություն - Ասֆալտապատման աշխատանքներ այն փողոցներ –

րում, որոնցում նախապես փոխվել են խմելու ջրագծերը:  
Նպատակը - Փողոցների ասֆալտապատում, բնակչության կենցաղը և ապրելակերպը քաղաքային բնակավայրերի մակարդակին ավելի մոտեցնելու համար:  
Խնդիրները - Հատկացումներ համայնքի բյուջեից, բնակչության մասնակցությունը կամավորության սկզբունքով այդ աշխատանքների կատարմանը:

Ծրագիր 6

Ներածություն - Գյուղապետարանի, Մանկապարտեզի գույքի ձեռք բերում և գազաֆիկացում:

Նպատակը - Հնարավորության սահմաններում`

- Մանկապարտեզի խոհանոցի կահավորում, մանկական աթոռների, խաղալիքների և այլ տեսակի գույքի ձեռք բերում:
- Գյուղապետարանին անհրաժեշտ աթոռների, պահարանների և այլ տեսակի գույքի ձեռք բերում:

Խնդիրները – Համայնքի բյուջեից և հնարավոր այլ աղբյուրներից հատկացումներ գյուղապետարանի, դպրոցի և մանկապարտեզի գույքի ձեռք բերման համար:

Համայնքի ֆինանսական միջոցների գնահատում

Համայնքում կոնկրետ ծրագրեր իրականացնելու համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը:

